Արձանագրություն N 3

N «ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 սեպտեմբերի 2018թ.

ժ.10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները:

<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝
2.1 <<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, հեռ. +374 77610400

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
<<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ներկայացրել էր հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ փաստաթղթերի վրա բացակայում էր էլեկտրոնային թվային ստորագրությունը:
Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր նշված անահամապատասխանությունները շտկելու համար: Սահմանված ժամկետում <<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ներկայացրել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն տեխնիկական բնութագիրը հրավերով պահանջվել է ***լամինատ 183x366, (18մմ, բաց գույն)***, մասնակիցը փաստաթղթերը շտկելուց հետո մասնակիցը ներկայացրել է ***լամինատ 183x366, (0.8մմ, բաց գույն)***, որը չի համապատասխանում հրավերով սպահանջված բնութագրին: Արձանգրենք, որ մասնակից առաջին անգամ ներկայացրել էր հրավերի պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր, սակայն էլեկտրոնային ստորագրությունները փաստաթղթերի վրայից բացակայում են:
Գնահատող հանձնաժողովը մերժում է <<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը, և առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչում <<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Ձորաշեն>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել հրավերով պահանջվող որակավորման փատաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով
<<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետնանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի թերի առկայությունը:
2. <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 Մերժել <<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

4.2 **ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2»** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Զորաշեն>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.3 «ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշների և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, և հաղթող մասնակիցներին որոշելու համար կիրավիրվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացությունը ստանալուց և մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<**ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

Անդամներ՝ _____ Լ. Խաչատրյան /Բուժական գծով տնորենի տեղակալ/

_____ Ա. Հովհաննեսյան /Կադրերի տեսուչ/

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան